Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում ներդրվել է ուսուցման նոր տեխնոլոգիաներ: 2012թվականի փետրվարի 14-ից գործում է նաև էլեկտրոնային գրադարան, որտեղ առկա է բնագիտական առարկաների գծով էլեկտրոնային գրականության շտեմարան՝ ֆիզիկա, մաթեմատիկա, աստղագիտություն, ինֆորմատիկա և այլ առարկաներին վերաբերող տարատեսակ գրականություն և ուսումնական նյութեր՝ այդ թվում՝ դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, ծրագրեր և այլն:

Համակարգչային լսարան-պորտալում ուսանողներն ու աշխատակիցները կարող են անվճար օգտվել 80.000 անուն էլեկտրոնային գիտական գրականությունից և ուսումնամեթոդական նյութերից, որտեղ դասակարգվում և արխիվացվում են ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական թեզերը, մասնագիտական առարկաների մի մասը դասավանդվում է համակարգչային տեխնիկայի կիրառմամբ ինչն էապես բարձրացնում է ուսուցման արդյունավետությունն ու դասավանդման որակը:

Նշված գրականությունը հասանելի է Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի համակարգչային լսարան-պորտալի, ինչպես նաև համալսարանի ընթերցասրահի համակարգչային ցանցերում: